15148

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«28» 11 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0206-23

Ձեռնարկողը՝ **«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի «Ինժեներական կենտրոն» մասնաճյուղ**
ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 43

Գործունեությունը՝ **«Դիլիջան ԳԲԿ-ի կողմնատար-գազատարի կառուցում (տեղափոխում)» օբյեկտի նախագծային փաստաթղթերի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**
Տավուշի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր՝ եզրակացությունը 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0206-23

«28» 11 2023թ.

«Դիլիջան ԳԲԿ-ի կողմնատար-գազատարի կառուցում (տեղափոխում)» օբյեկտի նախագծային փաստաթղթերի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի «Ինժեներական կենտրոն» մ/ճ
Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն (ՇՄԱԳ), Նախագիծ
Գործունեության կատեգորիան «Բ»

Տեղադրման վայրը՝ Տավուշի մարզ, Դիլիջան համայնք

Ներածական մաս: «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) նախատեսում է իրականացնել «Դիլիջանի» գազաբաշխիչ կայանի (ԳԲԿ) կողմնատար գազատարի շինարարություն և գազատարի տեղափոխման աշխատանքներ: Նախագծի նպատակն է կառուցել նոր գազատար՝ Ղազախ-Երևան մագիստրալ գազատարից սկիզբ առնող՝ Հաղարծին-Դիլիջան 6կմ հատվածի փոխարեն, ինչը ներկայումս ապահովում է Դիլիջանի գազամատակարարումը: Գազատարը ներկայումս շահագործվում է արձանագրված խախտումներով: Որոշ ժամանակահատված գազատարը չի շահագործվել, տարբեր շինությունների կառուցման արդյունքում չեն պահպանվել անվտանգության գոտիները: Քանի որ նպատակահարմար չէ գազատարը շահագործել խախտումներով, անհրաժեշտություն է առաջացել գազատարի այդ հատվածը տեղափոխել՝ ապամոնտաժելով նաև Dպ-700 մայրուղային գազատարի հին գազատար հատվածը:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի /այսուհետ՝ Օրենք/ 14-րդ հոդվածի, 8-րդ մասի՝ «Դիլիջան» ԳԲԿ-ի կողմնատար-գազատարի կառուցումը դասակարգվում է որպես «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ, քանի որ գործունեության տարածքներն առնչվում են բնության հատուկ պահպանվող տարածքների հետ («Դիլիջան» ազգային պարկ):

Նկարագրական մաս: Նախագծված գազատարի տեղադրման տարածքն ազատ է կառուցապատումից կամ ինժեներական ենթակառուցվածքներից: Նախագծով նախատեսված աշխատանքներն իրականացվելու են «Դիլիջան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի և դրան հարակից՝ Դիլիջանի համայնքային հողերում և ներառում է պետական և համայնքային սեփականություն հանդիսացող էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների, հատուկ նշանակության, հատուկ պահպանվող, բնակավայրերի և գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասեր /համաձայն կադաստրի կոմիտեի կողմից ներկայացված տեղեկատվության/: Օբյեկտի ուղեգծի 1700 մ երկարությամբ հատվածն անցնում է «Դիլիջան» ազգային պարկի «Շամախյան» տեղամաս մ/ճ-ի 13-րդ քառակուսու տնտեսական գոտիով: Հնարավոր ծառաթփուտային բուսականության հատման դեպքում ՊՈԱԿ-ն Ընկերության հետ համագործակցության շրջանակներում իրականացնելու է հատվող բուսականության հաշվեգնահատման ցուցակների կազմման աշխատանքներ:

Նախագծով նախատեսվում է երկաթգծի անցման հատվածում չգործող DN700մմ գազատարի 320մ երկարությամբ հատվածի ինչպես նաև գործող DN150մմ կողմնատար գազատարի 13 մ երկարությամբ հատվածի ապամոնտաժման աշխատանքներ, որոնց տեղում կտեղադրվի նոր DN 200մմ տրամագծով կողմնատար գազատարը: Ապամոնտաժման աշխատանքների ընթացքում հողային հանույթներից առաջացած բնահողը՝ 2940 մ^3 ծավալով կկուտակվի համայնքապետարանի կողմից հատկացված վայրում՝ հետագայում օգտագործելու նպատակով: Բոլոր ապամոնտաժված խողովակները տեղափոխվելու են շինարարության վայրից 90 կմ հեռավորության վրա գտնվող Ընկերության արտադրական բազա:

Նոր գազատարի ուղեգծի ընտրությունը կատարվել է՝ հաշվի առնելով գազատարի անվտանգության գոտիների համար սահմանված նորմերի ապահովումը, տարածքի ինժեներաերկրաբանական պայմանները, ինչպես նաև գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության աստիճանը:

Ընտրված տարբերակի համաձայն՝ ստորգետնյա կառուցվող կողմնատար գազատարը սկիզբ առնելով մագիստրալ գազատարից՝ անցնում է հրաձգարանի տարածքով, այնուհետև բնակելի շենքի (մոտ 58մ հեռավորության վրա) մոտով, որից հետո հատվելով «Դիլիջան» ազգային պարկի եզրային հատվածի հետ՝ միանում է Դիլիջան քաղաքի սպասարկման գազատարին:

Գազատարի հիմնական տեխնիկական պարամետրերն են՝

- պայմանական տրամագիծ - 200 մմ;
- առավելագույն աշխատանքային ճնշում - 5,5 ՄՊա;
- փաստացի աշխատանքային ճնշում - 2,5 ՄՊա;
- երկարություն ≈ 3128 մ:

Նախագծվող Dպ-200մմ կողմնատար-գազատարի սկիզբը (ՊԿ0+00) հանդիսանում է «Ղազախ-Երևան 2-րդ գիծ» Dպ-1000 մայրուղային գազատարի 68.4 կիլոմետրում միացման կետը, իսկ վերջնակետը նախատեսված է Դիլիջան ԳԲԿ-ի հսկիչ փականային հանգույցից առաջ՝ Dպ-150 մմ գործող գազատարին միացման կետում: Մինչև փականային հանգույցը գազատարը հատում է էլեկտրահաղորդման օդային գծեր՝ Դիլիջան Կույբիշևո ուղեհատվածում (79կմ ՊԿ 1+00): Հատման հատվածում նախատեսվում է իրականացնել գոյություն ունեցող ապամոնտաժման ենթակա՝ Dպ-700 մայրուղային գազատարի պատյանով: Համաձայն տեխնիկական պայմանների՝ միացման կետից 40 մ հեռավորությամբ նախատեսվում է 6.0x7.0 մ չափերով գծային փականային հանգույցի տեղադրում՝ արտածման մոմով: Այնուհետև գազատարի ուղեգիծն անցնում է «Դիլիջան» ազգային պարկի անտառային մասի եզրով դեպի հարավ-արևելք՝ մինչև Դիլիջան ԳԲԿ-ի հսկիչ փականային հանգույցը, որը գտնվում է «Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման» միջպետական ավտոմոբիլային ճանապարհի աջ կողմում՝ 98.8 կմ-ի հատվածում: Գազատարի շահագործման նորմալ պայմաններ ապահովելու և դրա բաղկացուցիչ կառույցների վնասման հնարավորությունը բացառելու համար սահմանված է անվտանգության գոտի:

Գազատարի կառուցման շինարարական աշխատանքները կիրականացվեն գերարագ գծային շինարարության առաջադեմ տեխնոլոգիաների կիրառմամբ՝ ապահովելով շինարարության ընթացքում բացասական ազդեցությունների կանխարգելմանը և նվազեցմանն ուղղված միջոցառումների կատարումը:

Գազատարի կառուցման նախապատրաստական և շինարարական աշխատանքները ներառում են.

- հողի բերրի շերտի հեռացում՝ տեղափոխելով այն ժամանակավոր կուտակավայր,
- կռունկների դեպի տեղամաս՝ մուտքի ճանապարհի կազմակերպում,
- սարքավորումների տեղակայում,

- խրամատների և փոսերի մշակում,
- խողովակների դասավորություն խրամուղիների եզրերին,
- խողովակների զոդում, մեկուսացման աշխատանքներ,
- խողովակաշարի տեղադրում խրամուղու մեջ, տեղադրումից հետո խրամուղու հետլիցք հողագրունտով,
- գազատարի ներքին խոռոչի մաքրում օտար առարկաներից,
- ամրության փորձարկում օդաճնշիչ և հիդրավլիկ մեթոդներով,
- փորձարկումից հետո ջրի հեռացում, խոռոչի չորացում,
- նախագծվող խողովակաշարի միացում գոյություն ունեցողին,
- տարածքի բարեկարգում (վերականգնում):

Հողային աշխատանքները ներառում են բուսահողի հեռացում, խրամուղու մշակում, բնահողի տեղափոխում ժամանակավոր կուտակավայր և հետլիցք, այնուհետև բուսահողով վերականգնում: Խրամուղու քանդումն իրականացվելու է միաշերեփ էքսկավատորով և ձեռքով: Մշակված բնահողից գազատարի երկայնքով ստեղծվելու է ժամանակավոր կույտ՝ հետլիցքի համար՝ ապահովելով խողովակաշարի անվտանգությունը: Խրամուղու հատակին՝ գազատարի տակ, ստեղծվելում է ավազի նախապատրաստական շերտ՝ δ=0.1մ և խողովակի շուրջ իրականացվում է պաշտպանիչ շերտ ավազից δ=0.2մ (ավազը բերվում է ավտոինքնաթափով 15կմ հեռավորությունից): Խողովակների մեկուսացումը ապահովվելու է պոլիէթիլենային եռաշերտ ծածկույթի միջոցով: Ավազի նստաշերտը խողովակի շուրջ տոփանվելու է ձեռքի տոփաններով՝ ստանալով նախագծային խտություն: Հետլիցքը բուլդոզերով (էքսկավատորով) իրականացնելուց հետո իրականացվելու է հողի մակերևույթի հարթեցում: Ավելացված բնահողի զանգվածը ինքնաթափերով տեղափոխվելու է 3կմ հեռավորության վրա գտնվող աղբավայր՝ Դիլիջանի համայնքապետարանի հետ համաձայնեցված:

Շինարարական աշխատանքների տեղամասի հարևանությամբ տեղակայվելու է շինհրապարակ՝ վարչական, տնտեսական, սանիտարակենցաղային նպատակներով կիրառվող շինություններով: Շինարարության ժամանակ ջուրն օգտագործվելու է վարչական աշխատողների և բանվորների խմելու, կենցաղային/տնտեսական նպատակների համար, ինչպես նաև շինարարական հրապարակների ջրցանի, տրանսպորտային միջոցների սպասարկման համար: Ջրցանի համար նախատեսված ջուրը բերվելու է ջրցան մեքենաների միջոցով, իսկ կենցաղային կարիքների համար ջրի մատակարարումն իրականացվելու է այդ նպատակի համար նախատեսված տարողություններով: Շինությունների տեղակայման վայրում կենցաղային կեղտաջրերի հեռացման նպատակով կտեղադրվեն անջրանցիկ նյութերից կառուցված զուգարանների խցիկներ, որոնք շինհրապարակի երկայնքով կտեղաշարժվեն և համապատասխան մարմինների հետ համաձայնեցված սահմանված ժամանակացույցով կհեռացվեն կոյուղու կոլեկտոր: Գազատարի հիդրավլիկ փորձարկումից առաջացած արտահոսքը ևս նախատեսվում է հեռացնել մոտակա երկաթբետոնե կոյուղի (համաձայնեցված՝ տեղական ինքնակառավարման մարմնի և ջրահեռացման համակարգը սպասարկող կազմակերպության հետ):

Շինարարության փուլի աշխատանքներն ուղեկցվելու են շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցություններով, ինչպես օրինակ՝ մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսների աղտոտում, հողերի էրոզիա և աղտոտում (փորված/հանված հողի և շինարարական թափոնների ոչ պատշաճ հեռացման/տեղադրման արդյունքում, շինարարության ընթացքում վառելիքաքսուկային և այլ նյութերի արտահոսքի և ժամանակավոր շինհրապարակների օգտագործման արդյունքում), օդի ժամանակավոր աղտոտում՝ պայմանավորված բեռնատարների աշխատանքով և փորման աշխատանքներով, աղմուկի և տատանումների առաջացում՝ պայմանավորված

շին.մեքենաների և սարքավորումների շարժով, ինչպես նաև կենսաբազմազանության վրա հնարավոր ազդեցություններով:

Հողային աշխատանքների և շինարարական տեխնիկայի և ավտոտրանսպորտի շահագործման ընթացքում կառաջանան մթնոլորտային արտանետումներ՝ փոշու և ծխագազերի (ազոտի երկօքսիդ, ածխածնի օքսիդ, ածխաջրածիններ, պինդ մասնիկներ (մուր), ծծմբային անհիդրիդ) տեսքով: Արտանետումներ են առաջանալու նաև եռակցման աշխատանքներից՝ եռակցման աերոզոլի և մանգանի օքսիդների տեսքով: Փորման-բեռնման աշխատանքների ժամանակ փոշու արտանետումները հաշվարկվել են՝ 1.126 գ/վրկ կամ 4.28 տ շին/ժամանակահատվածի համար: Արտանետումների նվազեցման համար ՇՄԱԳ-ում և ԲԿՊ-ում նախատեսվել են միջոցառումներ: Մասնավորապես՝ շինարարության ընթացքում առաջացող փոշու նվազեցման միջոցառումները ներառում են շինարարական նյութերի և թափոնների տեղափոխման համար փակ ծածկով բեռնատար մեքենաների օգտագործումը, շինհրապարակների ու մոտեցնող ճանապարհների պարբերաբար ջրումը, հողային զանգվածների խոնավացումը ջրով, հողային աշխատանքների կատարումը՝ փոշեորսիչով կահավորված սարքավորումներով: Աղմուկի նվազեցման նպատակով կարևորվել է տրանսպորտային միջոցների պարբերաբար ստուգումը, կարգավորումը և ձայնի խլացուցիչներով ապահովումը:

Շինարարության փուլում ջրային ռեսուրսների վրա ազդեցություններ չեն սպասվում, քանի որ շինհրապարակի մոտակայքում բացակայում են ջրային ռեսուրսները:

Գազատարի ապամոնտաժման և խրամուղիների փորման աշխատանքները կարող են ժամանակավոր վնասակար ազդեցություն ունենալ հողային ծածկույթի և շրջակա տարածքի բուսական ծածկույթի և կենդանատեսակների վրա: Համաձայն ՇՄԱԳ-ի տեղեկատվության՝ նախագծման և նախնական գնահատման փուլում խրամուղու երկայնքով իրականացված ակնադիտական և բուսաբանական հետազոտությունների արդյունքներով խրամուղու երկայնքով կենդանիների բներ չեն հայտնաբերվել, ծրագրի իրականացման տարածքներում ՀՀ Կարմիր Գրքում գրանցված բուսատեսակներ չեն դիտարկվել:

Կենսաբազմազանության վրա հնարավոր ազդեցությունները նվազեցնելու նպատակով ՇՄԱԳ-ում նախատեսված է՝

- հողային աշխատանքների հիմնական մասը պլանավորել և իրականացնել ոչ վեգետացիոն ժամանակաշրջանում.
- սահմանափակել բնական միջավայրերի խախտումը՝ շինարարական գործողությունների համար հատկացնելով նեղ միջանցք գազատարի ուղեգծով,
- արգելել տրանսպորտային միջոցների/սարքավորումների տեղաշարժը և շինանյութերի/թափոնների տեղադրումը շինհրապարակից դուրս տարածքում,
- խստորեն վերահսկել բուսականության մաքրման աշխատանքներին՝ իրականացնելով միայն նախագծված գազատարի ուղեգծի երկայնքով՝ սահմանված միջանցքից դուրս ազդեցությունները կանխելու համար:

Կենդանական աշխարհի վրա ազդեցությունը մեղմացնելու նպատակով նախատեսված է բացառել՝

- գիշերային ժամերին մեքենամեխանիզմների լուսավորությամբ կամ այլ լուսավորության կիրառմամբ շինարարական աշխատանքները,
- տրանսպորտային շարժը Դիլջան ազգային պարկի տարածքում՝ հատկապես պարկի պահպանության օբյեկտ հանդիսացող կարևոր կենդանատեսակների բազմացման շրջանում,
- շինարարական աշխատանքները ԱՊ-ի պահպանման գոտու այն տեղամասերում, որոնք հանդիսանում են կարևոր կենդանատեսակների բնադրավայրեր կամ միգրացիոն ուղիներ:

Հողային աշխատանքների արդյունքում կարող է վնասվել հողային ծածկույթը: Հողային ծածկույթի պահպանության նպատակով՝ մինչև շինաշխատանքների մեկնարկը, խրամուղու

երկայնքով բուսաշերտը պետք է կտրվի 0,2 մ հաստությամբ և ժամանակավոր կուտակվի 12 մ հեռավորության վրա հողակույտերում՝ գրունտից առանձին: Բուսահողի ժամանակավոր կուտակումն իրականացվում է գազատարի երկայնքով, շինմոնտաժային աշխատանքների համար հատկացված տարածքի սահմանում: ՀՀ գործող օրենսդրական պահանջին համապատասխան՝ գծային կառույցների շինարարության դեպքում հանված հողի բերրի շերտն օգտագործվում է առանց դրա պահպանման՝ շինարարության հետևանքով խախտված հողերի ռեկուլտիվացման նպատակով օգտագործելու համար: Գազատարի անցկացման աշխատանքների ավարտից հետո տարածքները գրունտով հարթեցվելու և տոփանվելու են, այնուհետև վերականգնվում բուսահողով և իրականացվում մելիորատիվ և ագրոտեխնիկական միջոցառումներ: Աշխատանքների ծավալներում նախատեսված է 17260.38մ^3 ծավալով բուսահողի հեռացում և հարթեցում՝ վերականգնումով: Նշված աշխատանքների նախահաշվային արժեքը կազմում է 4.6 մլն դրամ՝ առանց ԱԱՀ:

Նախատեսվող շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում, ինչպես նաև գազատարի ապամոնտաժման արդյունքում կարող են առաջանալ տարբեր տեսակի թափոններ, այդ թվում՝ մնացորդային հողային զանգված մետաղական և պլաստիկ դատարկ տարրաներ, եռակցման պողպատյա էլեկտրոդների մնացորդներ և եռակցման խարամ, շինարարական աղբ, շինհրապարակներում կամ բակերում հավաքված կենցաղային աղբ, ինչպես նաև վտանգավոր թափոնների տեսակներ, օրինակ՝ վառելիքաքսուկային յուղեր, ներկեր, լուծիչներ, մեքենաների ֆիլտրեր, մարտկոցներ և անվադողեր/ որոնց կառավարման համար ՇՄԱԳ-ում և Բնապահպանական և սոցիալական կառավարման պլանում սահմանվել են սկզբունքներ և մեղմացնող միջոցառումներ:

Եզրափակիչ մաս: Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննությունն իրականացվել է Օրենքի պահանջներով: Փորձաքննական գործընթացին մասնակցել են՝ տեղական ինքնակառավարման մարմինները /Դիլիջանի համայնքապետարան/ շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները /այդ թվում՝«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ը/, ներքին գործերի, առողջապահության, ԿԳՄՍ նախարարությունները, կատաստրի կոմիտեն, որոնց կողմից ներկայացված կարծիքները և առաջարկությունները ևս հաշվի են առնվել փորձաքննության գործընթացում:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ փորձաքննության փուլում ՇՄԱԳ-ի վերաբերյալ Դիլիջան համայնքում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: 4-րդ քննարկման ընթացքում բարձրացվել են հարցեր՝ հատման ենթակա ծառերի հաշվեգնահատման աշխատանքների իրականացման գործընթացների, նախագծված գազատարի բնակելի շենքերից գտնվելու հեռավորության և վերջինիս համար սահմանված քաղաքաշինական նորմերն ապահովելու վերաբերյալ /Դիլիջանի համայնքապետարանի ներկայացուցչի կողմից/: Հանրային քննարկմանը մասնակից «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի աշխատակիցների և Ընկերության հետ համատեղ ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ հավեգնահատման աշխատանքներն իրականացնել շինարարական աշխատանքների մեկնարկից առաջ: Քաղաքաշինական նորմերի ապահովման վերաբերյալ մասնագիտական կարծիք ստանալու համար նախագծային փաստաթղթերի փաթեթն ուղարկվել է կարծիքի Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին և ստացվել է դրական կարծիք:

Ամփոփելով վերոնշյալը՝ պետք է փաստել, որ Կողմնատար գազատարի կառուցումը կունենա դրական սոցիալական ազդեցություն Դիլիջան համայնքի համար, քանի որ կբարձրանա Դիլիջան քաղաքի գազամատակարարման արդյունավետությունը և կապահովվի գազամուղի շահագործման անվտանգությունը, քանի որ մայրուղային գազատարի 6կմ հատվածը ներկայումս օգտագործվում է խախտումներով: Կողմնատար գազատարի կառուցման շինարարական աշխատանքներում կներգրավվի տեղական

աշխատուժ, ինչը որոշակիորեն կնպաստի ընտանիքների սոցիալ-տնտեսական խնդիրների ժամանակավոր լուծմանը:

Փորձաքննական պահանջներ

1. Գործունեությունն իրականացնել՝ առաջնորդվելով «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 2002թ. մայիսի 11-ի «Դիլիջան» ազգային պարկի և «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կանոնադրությունները հաստատելու մասին թիվ 920-Ն որոշման պահանջներով:
2. «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տարածքներում շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է իրականացնել ելնելով շրջակա միջավայրի բաղադրիչների (կենսաբազմազանություն) վրա բացասական ազդեցությունների կանխարգելման, նվազեցման, շրջակա միջավայրին հասցվող վնասի հատուցման համար նախատեսվող միջոցառումների իրականացումից:
3. Գազատարի ապամոնտաժման և նոր գազատարի կառուցման շինարարական աշխատանքների արդյունքում առաջացող տարբեր տեսակի թափոնների հեռացումը, տեղադրումը կամ կրկնակի օգտագործումն իրականացնել ՀՀ օրենսդրական պահանջներին համապատասխան:
4. Հողի բերրի շերտի պահպանման հետ կապված միջոցառումներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ կառավարության 2017թվականի նոյեմբերի 2-ի N 1404-Ն և 2011 թվականի սեպտեմբերի 8-ի N 1396-Ն որոշումների պահանջներին համապատասխան:
5. Աշխատանքներն իրականացնելիս անհրաժեշտ է առաջնորդվել՝ ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N967-Ն, 2010 թվականի հունվարի 29-ի «ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» N71-Ն և N72-Ն և 2014 թվականի օգոստոսի 14-ի N781-Ն որոշումների պահանջներով, ապահովելով ՇՄԱԳ-ում ներկայացված միջոցառումների իրականացումը:
6. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով «Դիլիջան» ազգային պարկի տարածքում գազատարի ուղեգծի երկայնքով հատման ենթակա ծառաթփային բուսականության հաշվառումը և հաշվեգնահատման ցուցակների կազմումն իրականացնել «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի հետ համատեղ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի «Ինժեներական կենտրոն» մ/ճ-ի կողմից մշակված և փորձաքննության ներկայացված «Դիլիջան ԳԲԿ-ի կողմնատար-գազատարի կառուցում (տեղափոխում)» օբյեկտի նախագծային փաստաթղթերի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝ Հերիքնազ Մկրտչյան